ՀՏԴ 32:130.2 *Փիլիսոփայություն*

Մարետա Նիկողոսյան
փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ
ՀՊՏՀ, Փիլիսոփայության և հայոց պատմության ամբիոն, ք. Երևան

ԷԹՆԻԿ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ

Եվ այսպես, իր կենսագործունեության ընթացքում հայ ժողովրդի բնակության վայրը համապատասխանել է ազգային մշակույթի պահպանման և վերարտադրման տարածքին, իսկ դա նշանակում է, որ մշակութային ինքնության պահպանումը դարերով հանդիսացել է սեփական հայրենիքում հայ ժողովրդի գոյատևման արմատական պայմանը:

1.Ազգը, որպես ցեղային ինքնություն գլոբալիզացիայի մեր դարաշրջանում, սոցիոմշակութային ներթափանցման և արշավանքների պայմաններում կատարում է տեղեկատվության անվտանգության գործառույթ, պահպանելով այն մշակութային ավանդույթները, որոնք ձևավորվել են նախորդ դարերում, ինչով ապացուցել է էթնիկ ինքնության պահպանման իր կոչումը:

2.Դրանով հիմանավորվում է, որ «ազգային անվտանգություն» տերմինը գործնականում բխում է ազգային մշակույթից: Հայ ժողովրդի համար ազգային ինքնության պահպանումը բացառապես մշակութային խնդիր չէ, այլ առաջին հերթին ուղղված է ազգային ինքնության պահպանմանը, իսկ անկախ պետականության իմաստի ընկալումը, ըստ էության ուղղված է ազգային ինքնության պահպանմանն ու վերարտադրմանը պատմականորեն ձևավորված մշակութային տարածքներում:

3.Մեր օրերի զարգացող աշխարհում հայերի առանձնահատկության պահպանումը հնարավոր է լիարժեք դրսևորման և ստեղծագործական ներուժի իրացման պայմանների ձևավորման դեպքում: Դա հնարավորություն կտա ապահովել հայկական մշակույթի ապագան. ստեղծագործական զարգացվածության հիմքի վրա, որն այսօր մշակույթի զարգացման գերիշխող միտում է: Հետևաբար, ազգային մշակույթի ներուժի հայտնաբերման ու դրսևորման համար պայմաններ ստեղծելու նպատակով, մեր օրերում մշակույթի ոլորտի գերակա և սկզբունքային խնդիրը ազգային անվտանգությունն է:

Հանգուցային բառեր՝ *ազգային ինքնության պահպանություն, ռազմավարական մշակույթ, ինֆոկապեր, մշակութային պահանջմունքներ, մշակույթների երկխոսություն, մշակույթների բախում, մշակույթի ինկուլտուրացիայի գործառույթ, ազգի հոգևոր առողջացման հայեցակարգ:*

Мариета Никогосян
к.ф.н., доцент
АГЭУ, кафедра философии и истории Армении

ЭТНИЧЕСКАЯ КУЛЬТУРА КАК ГАРАНТИЯ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ

Итак, в процессе своей жизнедеятельности местожительство армянской нации соответствовало территории сохранения и воспроизведения национальной культуры, а это означает, что сохранение культурной идентичности многие века являлось кардинальным условием выживания армянского народа на своей родине.

1. *Нация, как племенная идентичность в нашу эпоху глобализации, в условиях свойственной цивилизации социокультурных проникновений и вторжений, выполняет функцию информационной защиты посредством сохранения тех культурных традиций, которые сформировались в предыдущих веках, чем и доказала свое призвание в сохранении этнической идентичности.*

2. *Этим обосновывается, что термин "национальная безопасность,, на практике исходит из сущности национальной культуры. Для армянского народа сохранение национальной самобытности не сугубо культурная задача, а, в первую очередь, направлено на сохранение национальной самобытности, а осмысление независимой государственности, в сущности, направлено на сохранение и воспроизводство собственной национальной самобытности на исторически сформировавшейся культурной территории.*

3. *В развивающемся в наши дни мире сохранение армянского своеобразия возможно при формировании всех условий для полного проявления и реализации творческого потенциала. Это даст возможность обеспечить будущее армянской культуры: на основе творческого развития, что сегодня в развитии культуры господствующая тенденция. Следовательно, создание условий для выявления и проявления созидательного потенциала национальной культуры — в наши дни приоритетная и принципиальная задача национальной безопасности в сфере культуры.*

Մարետա Նիկողոսյան
փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ
ՀՊՏՀ, Փիլիսոփայության և հայոց պատմության ամբիոն, ք. Երևան

ԷԹՆԻԿ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ

Եվ այսպես, իր կենսագործունեության ընթացքում հայ ժողովրդի բնակության վայրը համապատասխանել է ազգային մշակույթի պահպանման և վերարտադրման տարածքին, իսկ դա նշանակում է, որ մշակութային

ինքնության պահպանումը դարերով հանդիսացել է սեփական հայրենիքում հայ ժողովրդի գոյատևման արմատական պայմանը:

1.Ազգը, որպես ցեղային ինքնություն գլոբալիզացիայի մեր դարաշրջանում, սոցիոմշակութային ներթափանցման և արշավանքների պայմաններում կատարում է տեղեկատվության անվտանգության գործառույթ, պահպանելով այն մշակութային ավանդույթները, որոնք ձևավորվել են նախորդ դարերում, ինչով ապացուցել է էթնիկ ինքնության պահպանման իր կոչումը:

2.Դրանով հիմանավորվում է, որ «ազգային անվտանգություն» տերմինը գործնականում բխում է ազգային մշակույթից: Հայ ժողովրդի համար ազգային ինքնության պահպանումը բացառապես մշակութային խնդիր չէ, այլ առաջին հերթին ուղղված է ազգային ինքնության պահպանմանը, իսկ անկախ պետականության իմաստի ընկալումը, ըստ էության ուղղված է ազգային ինքնության պահպանմանն ու վերարտադրմանը պատմականորեն ձևավորված մշակութային տարածքներում:

3.Մե թի ոլորտի գերակա և սկզբունքային խնդիրը ազգային անվտանգությունն է: Մեր օրերի զարգացող աշխարհում հայերի առանձնահատկության պահպանումը հնարավոր է լիարժեք դրսևորման և ստեղծագործական ներուժի իրացման պայմանների ձևավորման դեպքում: Դա հնարավորություն կտա ապահովել հայկական մշակույթի ապագան. ստեղծագործական զարգացվածության հիմքի վրա, որն այսօր մշակույթի զարգացման գերիշխող միտում է: Հետևաբար, ազգային մշակույթի ներուժի հայտնաբերման ու դրսևորման համար պայմաններ ստեղծելու նպատակով:

Հանգուցային բառեր՝ *ազգային ինքնության պահպանություն, ռազմավարական մշակույթ, ինֆոկապեր, մշակութային պահանջմունքներ, մշակույթների երկխոսություն, մշակույթների բախում, մշակույթի ինկուլտուրացիայի գործառույթ, ազգի հոգևոր առողջացման հայեցակարգ:*

Marieta K. Nikoghosyan
PhD,
ASUE, Department of Philosophy and History of Armenia

ETHNIC CULTURE AS NATIONAL SECURITY GUARANTEE

Thus, during its vital activity, Armenian nation corresponded its place of residence with the area of conservation and reproduction of national culture, which means, that the preservation of cultural identity in its homeland for many centuries was the main condition for the survival of the Armenian people.

*Thus, **1.** Nation as a tribal identity, in this era of globalization in the conditions typical of civilization's socio-cultural infiltrations and intrusions, performs the function of information security through the preservation of cultural traditions that formed in previous periods and have proved their title in the preservation of ethnic identity.*

***2.** According to this substantiation the term "national security" in practice derives from the essence of national culture. For Armenian people, the preservation of cultural identity is not only a cultural problem, but first and foremost directed to the preservation of national identity, and the meaning "independent statehood", in fact, in the historical and cultural area is directed to the preservation and reproduction of own national identity.*

***3.** In our days of developing world, the preservation of Armenian cultural identity depends on the full manifestation and realization of creative potential Armenian people for the formation of all possible conditions. This will allow to ensure the future of armenian culture on the base of its creative development, which nowadays is a leading trend in the cultural developments. Therefore, the conditions for the creation of national culture's creative potential revelations and manifestations, which is, in the modern world, primary and fundamental problem of national security related to the cultural sphere. This means the securing of own human opportunities for the conditions of creative expression in the national state boundariesis a national priority.*

Key words: preservation of national identity, strategic culture, informational relations, cultural needs, dialogue between cultures, clash of the cultures, inculturation's function in culture, spiritual healing concept of the nation.

Բառի լայն իմաստով մշակույթը հանրային էակի գոյության միջավայրն է, «երկրորդ բնությունը», որը նա ստեղծում, վերարտադրում և փոխանցում է սերունդներին՝ ձևավորված նյութական, հոգևոր, սոցիալական կայուն արժեքների, նորմերի, ավանդույթների և խորհրդանշանների տեսքով: Այսինքն՝ մշակույթը որպես մարդկային գործունեության աշխարհ, արտեֆակտների աշխարհն է՝ բնության վերափոխումը հասարակության օրենքներին համապատասխան: Հերմենևտիկայի փիլիսոփայության ներկայացուցիչ Մ. Հայդեգերը գրում է. «...մարդու գործունեությունը կազմակերպվում է մշակույթի ձևով, որը ժամանակակից աշխարհում դիտվում է որպես գերագույն արժեքների իրականացում՝ կատարելության հասած մարդկային բարձրագույն արժեքների միջոցով: Մշակույթի էությունից բխում է, որ այդպիսի կատարելագործման պայմաններում այն իր հերթին կատարելության է հասցնում և իրեն՝ դառնալով մշակութային քաղաքականություն»[1]: Հետևաբար, մշակույթը ոչ միայն արտեֆակտների աշխարհն է, այլև այն իմաստների, որոնք մարդը ներդնում է իր գործունեության արդյունքների մեջ: Իսկ սա նշանակում է, որ սեփական ուրույն մշակույթի պահպանությունն, ըստ էության, ազգային ինքնության պահպանություն է, քանի որ ազգային պատկանելության ձևավորման ակունքներում ընկած է ազգային կեցության ամբողջականության անվտանգության պահպանությունը արտաքին ոտնձգություններից և ներքին տարընթացություններից:

[1] Хайдегер М. Время картины мира // Новая технократическая волна на западе. с. 93, М., 1986

Ցանկացած երկրում մշակույթը պետական քաղաքականության կարևոր առաջնահերթություններից է, և ազգային մշակույթի պաշտպանությունը մեծ հաշվով բանակի, իրավապահ համակարգի, արդարադատության, երկրի ներքին և արտաքին հետևողական քաղաքականության կարևոր գործառույթներից մեկն է, քանի որ մշակույթը որպես երևույթ ընդգրկում է էթնիկ հանրույթի հաղորդակցության ողջ համալիրը, և ցանկացած էթնիկ հանրույթի յուրօրինակ ինքնությունը պայմանավորված է հենց մշակույթի յուրահատկությամբ: Այն, իր ամենաթափանց ունակությամբ (կումուլյատիվ էֆեկտ), ի վիճակի է մարդկանց գիտակցության միջոցով դրականորեն ազդել հասարակական հարաբերությունների վրա: Այս հատկության շնորհիվ մշակույթը, եթե միտված է դեպի մշակութային քաղաքականության հայեցակարգը, կարող է հանդես գալ որպես ազգային և միջազգային անվտանգությունը համակազմավորող և կազմակերպող գործոն:

Ժամանակակից գիտական աշխարհում շրջանառվում է ազգային անվտանգության սոցիոլոգիայի այնպիսի հասկացություն, ինչպիսին է «ռազմավարական մշակույթը»[1]: Այստեղ խոսքն այն մասին է, թե հասարակությունն ինչպես է մտածում, խոսում, գրում, կինոֆիլմեր նկարում այն մասին, թե ինքն ինչ պատկերացում ունի միջպետական հարաբերություններում անվտանգության, ռազմական ուժի դերի, գործառույթների արդյունավետության և այն մասին, թե մեր օրերում ինչպես են ընկալվում անվտանգության նկատմամբ սպառնալիքները: Այսպիսով՝ ռազմավարական մշակույթը իրենից ներկայացնում է շարժական (ոչ ստատիկ) պատմամշակութային, լեզվաբանական, սոցիալ-քաղաքական և ազգային գործոնների համախումբ, որն օգնում է այդ համակարգի կենսունակությանն ուղղված լավագույն լուծումների մշակմանն ու պահպանմանը[2]:

Ռազմավարական մշակույթը բազմակողմ և բարդ զարգացմամբ ընթացող համակարգ է, որը միավորում է արժեքներ, կարծրատիպեր, առասպելներ, գիտական նորույթներ և այն անհատների ինտուիցիան, ովքեր մասնակցում են ազգային անվտանգության հիմնախնդրի ձևավորմանը: Ռազմավարական մշակույթը, որպես գործառող համակարգ, իրենից ներկայացնում է ազգի, որպես յուրահատուկ սոցիալական օրգանիզմի ինքնապահպանման, ինքնավերարտադրության և ինքնակատարելագործման համար անհրաժեշտ պահանջմունքների ապահովումը՝ նրա արդիական գոյությանը նպաստող հիմնարար արժեքների առկայությամբ:

Մշակույթի զարգացման աստիճանը կարելի է որոշել տվյալ հանրույթի պահանջմունքների բազմազանության և այդ պահանջմունքները բավարարելու մեխանիզմների քանակական ու որակական հատկանիշներով: «Մշակույթ» հասկացությունն, առհասարակ, դիտվում է որպես մի գործուն համակարգ, որը բավարարում է մարդու երեք տիպի՝ ***հիմնարար, ածանցյալ և ինտեգրատիվ պահանջմունքները***[3]:

Հիմնարար պահանջմունքները մարդկանց կենսապահովման առաջնային՝ սննդի, հագուստի, բնակարանի և նմանատիպ այլ պահանջմունքների համախումբն է:

Ածանցյալ պահանջմունքներն, ըստ էության, բխում են հիմնարար պահանջմունքներից և վերաբերում են կենցաղային հարմարավետությանը՝ կառույցներին, տան ներքին և արտաքին հարդարմանը, հանգստի ու ժամանցի ձևերին և նյութական մշակույթի այլ տարրերին:

Ինտեգրատիվ պահանջմունքները հանրության անդամների ու տարբեր խմբերի միջև հաղորդակցության և փոխանակային հարաբերությունների կազմակերպման միջոցներն ու ձևերն են, հանրության ինքնակազմակերպումն իրականացնող հաստատությունները, հանրային ինքնագիտակցությունը պայմանավորող արժեքային համալիրը, ինֆոկապերի շրջանառության մեխանիզմները և հոգևոր մշակույթն ամբողջությամբ:

Մշակույթի գործառութային հատկանիշները պայմանավորող մեթոդները համաժամանակյա-հորիզոնական (սինխրոն) և տարաժամանակյա-ուղղահայաց (դիախրոն) ինֆոկապերն են: Առաջինի դեպքում ապահովվում է ժամանակային նույն հարթության վրա գտնվող էթնոսի տարբեր միավորների՝ առանձին անձանցից մինչև էթնիկ լոկալ խմբերի միջև համակեցությունը, հաղորդակցությունը, ինչպես նաև մշակութային տեղեկատվության շրջանառությունը: Տարաժամանակյա-ուղղահայացի դեպքում իրականանում է սերնդից-սերունդ պատմական կտրվածքով տեղեկատվության փոխանցումն ու վերարտադրությունը:

Այս առումով մշակութային ոլորտում հոգևոր անվտանգության հիմնախնդիրը ինֆոկապերի նկատմամբ ազգային ու պետական վերահսկողության պահպանումն է: Եթե օտար մշակույթներին հաջողվի սողոսկել տվյալ մշակութային տեղեկատվության, շրջանառության և վերարտադրության ոլորտ, ապա դրանք իրենց ձեռքը կվերցնեն ամենից առաջ հոգևոր ու բարոյական արժեքների քարոզչությունը, ինչի ականատեսն է ժամանակակից աշխարհը «Ժողովուրդների կործանման մեծագույն ողբերգության ծրագրի» (ԿՎՀ ապագա տնօրեն Ալեն Դալեսի ելույթը՝ ներկայացված 1945 թ. ԱՄՆ կոնգրեսում) իրականացման արդյունքում: Համակարգված ծրագրով քաոս սփռելով՝ այդ ծրագրի հեղինակները գրականության և արվեստի միջոցով ժողովուրդների իրական արժեքները փոխեցին կեղծերով և ստիպեցին հավատալ այդ կեղծ արժեքներին: Գրականությունից և արվեստից աստիճանաբար դուրս մղվեց դրանց հասարակական էությունը, և ապա գրականությունն ու կինոն սկսեցին պատկերել ու փառաբանել միայն ամենազազրելի մարդկային զգացմունքները: Այսինքն՝ աննկատորեն սերմանեցին սուտն ու կեղծիքը, ստրկամտությունն ու ստորությունը, թմրամոլությունն ու հարբեցողությունը, փողի պաշտամունքն ու ուժի գերակայությունը, դավաճանությունն ու ժողովուրդների թշնամությունը: Մարդկանցով սկսեցին զբաղվել մանուկ հասակից, խաղագումարը դրեցին երիտասարդության վրա՝ քայքայելով, բարոյալքելով ու այլասերելով նրան: Այսինքն՝ այդ ծրագրով ապականելով երիտասարդությանը, խեղաթյուրելով նրա արժեհամակարգը,

[1] Տե՛ս Сулименко Е. Г., Культурная политика как фактор национальной безопасности в условиях глобализации. էջ 32:
[2] Տե՛ս Николаев П., Культура как фактор национальной безопасности. էջ 76-77:
[3] Տե՛ս Лурье С., Историческая этнография, էջ 18

նվիրվածությունը ծնողի, ազգի ու հայրենիքի գաղափարներին՝ ծրագրի հեղինակները ստացան իրենց որոնած ազատ աշխարհի կոսմոպոլիտներ, ապա նաև՝ լրտեսներ[1]:

20-21-րդ դդ սահմանագլխին երևան եկան և հաստատվեցին համաշխարհայնացման գործընթացում քաղաքակրթությունների անխուսափելի բախման վերաբերյալ մի շարք գաղափարներ (Ու. Բեկ, Ս. Հանթինգտոն, Ֆ. Ֆուկույամա, Յու. Հաբերմաս), որոնց անհրաժեշտ արդյունքը դարձավ զարգացման արևմտյան լիբերալ մոդելի տիրապետությունը: Այդ մոդելի իրականացման հնարավոր եղանակներից մեկը արևմտյանից տարբեր մշակույթների նպատակային ոչնչացմանն ուղղված կազմակերպված գործունեության ծավալումն է:

Մեր կարծիքով, ազգի հոգևոր-բարոյական անվտանգության տեսանկյունից մշակութային կյանքում, առանձնահատուկ կարևորություն ունեն ինֆոկապերի շրջանառության կանոնակարգման նկատմամբ պետական քաղաքականության որդեգրումը[2]:

Անվտանգության ապահովմանն ուղղված այդ քաղաքականությունն, առհասարակ, իրականանում է ***ներքաղաքական, սոցիալական և հոգևոր*** ոլորտներում[3]:

Ներքաղաքական ոլորտում ազգային շահը պահանջում է սահմանադրական կարգի կայունության ապահովում, քաղաքացիական խաղաղության և ազգային համաձայնության պահպանում, միասնական օրինականության դաշտի և իրավակարգի հաստատում և որպես այդ գործընթացի ավարտ, դեմոկրատական հասարակության ձևավորում և այն պայմանների չեզոքացում, որոնք կարող են նպաստել քաղաքական ու կրոնական ծայրահեղության, ազգային անջատողականության, ինչպես նաև ազգամիջյան սոցիալական, կրոնական և այլ տիպի բախումների ու ահաբեկչության առաջացմանը:

Սոցիալական ոլորտում ազգային շահը ժողովրդի բարձր կենսամակարդակի ապահովումն է: Սոցիալական անվտանգությունը սահմանվում է որպես հասարակության որոշակի վիճակ, որը ներառում է արտադրության բոլոր հիմնական ոլորտների, ներքին սահմանադրական կարգի, արտաքին անվտանգության և մշակույթի պահպանությունը՝ ապահովելով ինչպես սոցիալական պայմանների անհրաժեշտ մակարդակ, այնպես էլ մատուցվող նյութական բարիքներ և բազմապիսի հոգեբանական, սոցիալական ու բնապահպանական, սանիտարա-համաճարակային և այլ ծառայություններ: Նման պայմաններում իրականացվում է մարդու և հասարակության կենսապահովման բարձր չափանիշներն ամբողջությամբ՝ երաշխավորելով մարդկանց ֆիզիկական և հոգևոր առողջությունը:

Մեկ այլ մոտեցման համաձայն՝ հասարակական անվտանգությունը սահմանվում է որպես հասարակայնորեն վտանգավոր գործոններից և բացասական ազդեցություններից անձի կենսականորեն կարևոր շահերի պաշտպանություն:

Հոգևոր ոլորտում ազգային շահերը հասարակության բարոյական արժեքների, հումանիզմի և հայրենասիրական ավանդույթների պահպանումն ու ամրապնդումն է: Ազգի հոգևոր անվտանգությունը խիստ որոշակի պայմանների համակարգ է, որը մշակույթին և հասարակությանը թույլ է տալիս պատմականորեն ձևավորված նորմերի շրջանակներում պահպանել իրենց կենսականորեն կարևոր չափորոշիչները: Այդ նորմերի շրջանակներից մշակութային ու արժեքային-նորմատիվ բնույթի այլազան գործոնների ազդեցությամբ չափորոշիչների ձևախեղումը հանգեցնում է նախ անկազմակերպվածության, ապա ազգային աղետի, այսինքն՝ հասարակության հոգևոր հիմքերի քայքայմանը և որպես ամբողջական գործուն համակարգի, նրա փլուզմանը: Մշակութային համակարգի գոյությունն ապահովում է հոգևոր արժեքների փոխանցումը մի սերնդից մյուսին, ամրագրում և պահպանում է ազգի լեզուն, տվյալ մշակութային հանրույթին բնորոշ աշխարհի պատկերը, իրականացնում է ազգային ինքնագիտակցության և տվյալ սերնդի մշակութային նույնականացման գործառույթ՝ նպաստելով հասարակական համաձայնությանն ու մարդկային հանրույթի համախմբմանը: Այդ ամենի արդյունքում ստեղծվում են ազգային արժեհամակարգի տեսանկյունից կենսականորեն կարևոր արժեքներ և իդեալներ:

Ազգային մշակույթի՝ տնտեսության, քաղաքականության, կրթության հոգևոր հիմքերի անտեսումը հատկապես վտանգավոր է փոխակերպվող հասարակությունների դեպքում: Փոխակերպվող հասարակության պայմաններում, ազգի մշակութային ինքնության պահպանման եղանակները որոնելիս հետազոտողներն առաջադրեցին ազգային անվտանգության հումանիտար հիմքերի տեսությունը: Այս ոլորտում նախապես ձևավորվեցին առանձին թեմաներ, որոնք այս կամ այն կերպ կապված են քննարկվող հիմնախնդրին՝ ***հումանիտար անվտանգություն, ազգային անվտանգության սոցիալ-հումանիտար հիմնախնդիրներ, ազգային անվտանգության մարդկային բաղադրիչ*** և այլն: Գիտական շրջանառության մեջ մտան այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են ***«հոգևոր անվտանգությունը», «գաղափարական անվտանգությունը»:*** Այնուհետև ձևավորվեցին անվտանգության տեսական ուղղությունները՝ ***անվտանգության սոցիոլոգիա, անվտանգության մշակույթ*** և այլն[4]:

Ժամանակակից աշխարհում շրջանառվում է նաև ***«մշակույթների երկխոսություն»*** *կոչվող* տեսությունը, որն ընկալվում է որպես պատմական կամ ժամանակակից տարբեր մշակույթների փոխազդեցություն, ներթափանցում կամ վանում, կամ դրանց դավանական, տնտեսական կամ սոցիալ-քաղաքական համագործակցության ձև: Մշակույթների փոխազդեցության ընթացքում երկխոսությունն իրականացնում է երկակի գործառույթ՝ մի կողմից

[1] Տե՛ս http://www.peoples.ru/military/scout/dalles/
[2] Տե՛ս Արտյունով Ս., Народы и культуры. М., էջ 17-41:
[3] Տե՛ս Фомин С. А., Обеспечение национальной безопасности, М., 2007 էջ 106:
[4] Տե՛ս Ерасов Б.С., Социальная культурология. М. , 1998: Кузнецов В.Н., Социология безопасности. Формирование культуры безопасности в трансформирующемся обществе. М., 2002: Сластенин В.А., Гуманитарная культура специалиста //«Магистр 1»1991, N 1: Явчуновская Р.А., Глобальные проблемы в человеческом измерении (Основы гуманитарной безопасности). Курс лекций. М., 2001:

այն ապահովում է միջմշակութային փոխազդեցությունների իրականացման հնարավորությունը, մյուս կողմից պահպանում է ուժերի հնարավոր հավասարակշռությունը երկխոսության կողմերի միջև՝ հակադրվելով համաշխարհայնացման արագընթաց զարգացմանը: Մշակույթների երկխոսությունը թեև ինքնին նոր մշակութային իրավիճակ չի ստեղծում, բայց լայն հնարավորություններ է առաջադրում տարբեր սոցիոմշակութային արժեքների և նորմերի կրողների իրական փոխազդեցության համար: Այս երևույթը արդի աշխարհում դրսևորվեց հատկապես աշխատանքային բարձր միգրացիայի պայմաններում և նոր սոցիոմշակութային միջավայրին ներգաղթյալների ադապտացիայի գործում:

Բայց Արևմուտքում մուլտիկուլտուրականության քաղաքականության պարտությունը ցույց տվեց, որ յուրաքանչյուր երկիր պետք է որոնի մշակույթների երկխոսության իր տարբերակը՝ նկատի առնելով այն հանգամանքը, որ ժամանակակից սոցիոմշակութային առաջընթացի պայմաններում պետք է գերակա դիրքում լինեն տվյալ ժողովրդի հոգևոր-բարոյական անվտանգության պահպանման հիմնախնդիրները:

Հետխորհրդային ժամանակաշրջանում մեր ժողովրդի խնդիրը ներկայիս զարգացող աշխարհին ինտեգրման համատեքստում մշակութային ինքնության պահպանման սկզբունքների պարզաբանումն է: Դա թույլ է տալու մի կողմից ինտեգրվել այսօրվա զարգացող աշխարհին՝ նրանց կողմից ստեղծված համամարդկային արժեքների յուրացման միջոցով, մյուս կողմից պահպանել և վերարտադրել մեր ազգային ինքնատիպությունը պայմանավորող մշակութային համակարգը:

Պետք է նկատի առնել նաև այն հանգամանքը, որ համաշխարհային մշակույթի հիմքը ազգային ավանդույթներն են՝ ասքերը, էպոսները, հեքիաթները, երաժշտությունը, այսինքն՝ բանահյուսությունը: Սա նշանակում է, որ այն ստեղծագործողները, ովքեր օգտվել են ազգային ակունքներից, ստեղծել են ժամանակի գործոնը շրջանցող գլուխգործոցներ: Այս հիմնադրույթն իր բազմաթիվ դրսևորումներն ունի տարբեր ազգային մշակույթների մեջ: Օրինակ՝ Բիզեի «Կարմենը», Մ. Ռավելի «Բոլերոն» հագեցած են իսպանական ազգային երաժշտության կոլորիտով, իսկ Ա. Տիգրանյանի «Անուշի», Ա. Խաչատրյանի բալետների ատաղձը զուտ հայկական է: Առհասարակ, ազգային երաժշտությունը ցանկացած ժողովրդի երաժշտական մշակույթի պատվանդանն է: Ջազն առաջացել է աֆրո-ամերիկյան և եվրոպական (կելտական) ազգային երաժշտության զուգորդումներից, բիթլզները 17-18-րդ դդ անգլիական բալլադային ոճի փոխադրություններ են կելտական երաժշտական ավանդույթներին, քանթրիները կելտական հնագույն երաժշտության նորովի մեկնաբանությունն են ԱՄՆ-ի մշակութային-կենցաղային և միգրացիոն խոշորապլան տեղաշարժերի արտացոլմամբ:

Հայ ազգային երաժշտությունը պարունակում է խոհափիլիսոփայական, ենթագիտակցական ինֆորմացիայի անընդհատություն՝ ներծծված հոգու խորը տվայտանքներով: Այն նման չէ հնդկական, արաբական ու իրանական երաժշտական մշակույթներում առկա հայեցողական պատկերներին՝ մերկ կանայք, պորտապար և այլն: Մշակույթի ավանդույթային շերտի ինֆորմացիան հիմնականում վերաբերում է սոցիոմշակութային հարթությանը և համապետական ընդգրկման ավանդույթներ չի պարունակում, այն դեպքում, երբ համազգայինը արտահայտվում է սոցիոնորմատիվ[1] մշակույթի տեղական առանձնահատկություններով:

Մշակութային համակարգը սերտորեն փոխկապակցված է քաղաքական ու տնտեսական համակարգերի հետ, և դրանցից որևէ մեկի փոփոխությունը համապատասխան փոփոխություններ է առաջացնում նաև մյուսներում: Զարգացած երկրներին ինտեգրվելու միջոցով արևմտյան մշակութային միջավայրում ձևավորված և այդ մշակույթի զարգացման արդյունք հանդիսացող տնտեսական և քաղաքական մոդելների յուրացումը անխուսափելիորեն հանգեցնում է մշակութային փոփոխությունների: Դրանք չեն կարող վտանգավոր լինել էթնոմշակութային ինքնության վերարտադրության տեսանկյունից միայն այն դեպքում, եթե ազգային մշակութային համակարգ ներմուծվող արժեքները յուրացվում են ոչ թե պարզ ընդօրինակման, այլ սեփական արժեհամակարգին դրանց հարմարեցման միջոցով: Հակառակ դեպքում էթնիկ սոցիոմշակութային միջավայրում առաջանում են մշակութային բախումներ և օտարումներ, ինչն էլ թուլացնում և ապա վտանգում է ազգային մշակույթի ինքնությունն ու հաղորդակցային գործառույթը:

Համաշխարհայնացման գործընթացների հետազոտողներից, «Մշակույթների բախում» տեսության նշանավոր ներկայացուցիչ Ս. Հանթինգտոնը կարծում է, որ այդ գործընթացների արդյունքում համաշխարհային քաղաքակրթությունը մտնում է նոր փուլ և մարդկությանն առանձնացնող սահմանները ճշգրտելու և հակասությունները հաղթահարելու միջոցը մնում է ազգային մշակույթը: Համաշխարհայնացումը թեև արագորեն տարածվում է ողջ աշխարհում, բայց չի փոխարինում «ազգ», «ազգային պետություն» և «ազգային մշակույթ» հասկացություններին[2]: Այս երևույթն ի վերջո բերում է իր հակադարձ էֆեկտը՝ հանգեցնելով ազգայնականության ծաղկմանը, ինչի վկայությունն են Վրաստանում, Ուկրաինայում, Բալկաններում, Մերձավոր Արևելքում և ժամանակակից աշխարհի բազմաթիվ այլ երկրներում տեղի ունեցող իրադարձությունները:

Համաշխարհայնացման գաղափարախոսների կարծիքով՝ օրինակ, ցանկացած երկրի նկարիչ ներհայեցողական (իմպլիցիտ) կերպով կարող է գեղարվեստական կերպարներ ստեղծել՝ օգտագործելով Արևմուտքի կոդերն ու չափորոշիչները: Դրանով համաշխարհայնացումը դառնում է մշակույթների ձուլման գաղափարախոսություն: Զարգացման այսպիսի ընթացքը պետությունների մշակութային քաղաքականությունից ակնկալում է համաշխարհայնացման բացասական ազդեցությանը հակադրվելու որոշումներ ու քայլեր, որոնք կոչված են պահպանելու դեռևս ազգային պատկանելության ձևավորման ակունքներում գիտակցված համակեցության անվտանգությունն ապահովող չափորոշիչներն ու արժեքները: Այս երևույթը մտածելի է, քանի որ մշակույթը՝

[1] Եզրույթը վերցված է «Культура жизнеобеспечения и этнос» գրքից, Եր. 1983:
[2] Տես Хантингтон С., Столкновение цивилизаций, Электронный ресурс URL: www.archipelag.ru *l geopoolitics l stolknowenie lclash lclash.*

նպաստելով կեցության ընկալմանն ու իմաստավորմանը, իր միասնության ու փոխկապվածության շնորհիվ էականորեն ազդում է ազգային անվտանգության վրա[1]:

Սակայն համաշխարհայնացումը չպետք է դառնա մշակույթների ձուլման գաղափարախոսություն, ինչը պետությունների մշակութային քաղաքականությունից ակնկալում է որոշումներ ու քայլեր, որոնց շնորհիվ հնարավոր կլինի հակադրվել համաշխարհայնացման բացասական ազդեցությանը:

Այն. որ աշխարհում միշտ էլ ընթացել են սերտաճման գործընթացներ տարբեր մշակութային, նույնիսկ քաղաքակրթական գործընթացների միջև, բնական երևույթ է: Նորույթ չէ նաև մշակութային էքսպանսիայի գաղափարը: Հայոց պատմության ընթացքում հայ մշակույթի նկատմամբ նման բազմաթիվ փորձեր եղել են, և հենց դրանց դիմակայման լավագույն միջոցը դարձել է մշակութային սեփական-առանձնակի համակարգի ձևավորումն ու զարգացումը: Մեր ժողովրդի կյանքում այս երևույթը դրսևորվել է հատկապես պետության բացակայության պայմաններում, երբ մշակույթը մի տեսակ ազգի ինքնապահպանման բնազդի է վերածվել՝ էթնիկ նույնականության պահպանումն ապահովող մշակույթի տիպերի շնորհիվ: Այս գործընթացը տեսանելի է ինչպես Արշակունիների, այնպես էլ Բագրատունիների արքունական տների անկումից հետո:

Պետք է նկատի առնել մի առանձնակի կարևորության հանգամանք, որ հայոց էթնիկ ինքնագիտակցության և հոգևոր համախմբվածության գործում առանցքային դերակատարության տարրերից է պատմական հիշողության գործոնը, որը հայոց ազգային գաղափարախոսության ձևավորման տարրերից մեկն է: Ազգը որոշակի իմաստով հավաքական վարքի դրսևորման ձև է, ուր կարգավորիչ գործառույթ է վերապահված պատմական հիշողությանը: Վերջինս ազգի առանձին անդամներին պահում է սոցիոմշակութային օրգանական համախմբվածության մեջ՝ ազգի պատմությունը դարձնելով շարունակական ու ժառանգական: Պատմական հիշողությունը մեր ազգի համար մի յուրօրինակ շրջան է՝ անցյալի համար ներկայում նորից ծնվելու, ներկայի դեպքում ապագա ծնել-ձևավորելու եղանակով: Այն դեպքում, երբ, ինչպես գրում է թուրքական արգելված գրականության ներկայացուցիչներից մեկը՝ Էլիֆ Շաֆաքը թուրքի համար անցյալի ու ներկայի միջև գործում է տարածական մեծ անջրպետ՝ անցյալը ինքնակա ապրել անցել է, այն ոչ մի կապ չունի այսօրվա թուրքի հետ, որն իր ներկայով ապրում է իր այսօրը: Սերունդների միջև կապի բացակայության այս հոգեբանությունն էլ, որպես յուրօրինակ վահան, օգտագործվում է պատմական փաստը հերքելու համար:[2] Մեր ազգի պարագայում պատմական հիշողությունը այն կարևոր ապահովագրական աշխատակարգն է, որի շնորհիվ սահմանափակվում են ազգային պատկանելությունը մոռանալու հնարավոր միտումները: Այս տեսակետից պատմական հիշողությունը կարելի է բնութագրել որպես ազգի ճակատագրով, նրա վաղվա տեսլականով ապրելու ազգի առանձին անդամների համար պարտադիր սոցիոմշակութային դաշտ:

Հետխորհրդային շրջանում հայկական հասարակության կենսագործունեության հիմնական ոլորտների մասնավորեցման, սոցիալական խորագույն անհավասարության արմատավորման արդյունքում մեծացավ դեպի բնակչության լուսանցքային խավերի հոգևոր պահանջմունքները կողմնորոշված զանգվածային մշակույթի ցածրաճաշակ արտադրանքի ծավալը: Առայսօր իրականանում է տարբեր կարգի անենաթողության ու բռնության վրա հիմնված կենսակերպի, ինչպես նաև զանգվածային մշակույթի քարոզչություն: Գործառող այս իրավիճակի հետևանքով տեղի է ունենում հոգևոր-մշակութային արժեքների վերարժեքավորում և ապա արժեզրկում, իսկ մշակույթն իր ամբողջության մեջ, սկսում է կորցնել հասարակության կենսագործունեության ոլորտում գլխավոր՝ մարդկանց վարքի բարոյական կարգավորիչի, սոցիալական կոդի և արժեքային հիմքերի ամրագրման իրեն վերապահված կարևորագույն դերը:

Արդի պայմաններում **հայոց ազգային ոգու վերածնունդը պետք է սկսել ազգի հոգևոր առողջացման հայեցակարգի** ձևավորումով, որն ունի մի շարք ուղղություններ:

Այստեղ **առաջնահերթությունը պատկանում է հասարակության զարգացման ռազմավարական հնարավորությունների և միջոցների ձևավորմանը: Հասարակության ակտիվ մասի նպատակաուղղումը կենսականորեն կարևոր ազգային նախագծերի իրականացմանը, հնարավորություն է ստեղծելու դաստիարակել ազատ և պատասխանատու և հայրենիքի գաղափարով տոգորված, խորապես հայրենասեր ազգային ընտրախավ:** Այսինքն՝ **ազգի հոգևոր վերածնունդին միտված գործունեության ծավալում հնարավոր բոլոր ուղղություններով, որն էլ իր հերթին հանգեցնելու է ազգային ռազմավարական գաղափարների ձևավորմանը:**

Այս գործունեության մեջ մեծ կարևորություն ունի մշակութային անվտանգության քաղաքականության ռազմավարության համակարգում **մշակույթի ինկուլտուրացիայի գործառույթի ապահովումը**: Սկսած մանուկ հասակից այս գործառույթն ապահովում է մարդու կողմից տվյալ էթնոմշակութային առանձնահատկությունների՝ լեզվի, սոցիոնորմատիվ, նյութական և հոգևոր մշակույթի տարրերի յուրացումը, և տվյալ հանրույթին պատկանելության գիտակցության ձևավորումը: Նրա գնահատականները, շրջապատող աշխարհի ընկալման եղանակներն ու վերարտադրության լեզուն պայմանավորված են այդ մշակույթի արժեքային-նորմատիվ բովանդակության ամբողջական յուրացմամբ:

Մշակութային անվտանգության ոլորտում պետական քաղաքականության կարևոր ուղղություններից մեկն, ըստ էության, պետք է համարել **քաղաքացիական ինքնագիտակցության և հայրենասիրության ձևավորումը բնակչության մոտ**: Նմանատիպ հիմնախնդրի լուծման հիմքում պետք է ընկած լինի **ազգային ինքնագիտակցության ձևավորումը, արժեքային հարաբերությունն անձի, հասարակության, պետության նկատմամբ, դրանց վերածնունդի և զարգացման գաղափարների ու արժեքների նկատմամբ**: Անհրաժեշտ է քաղաքացիներին հաղորդակից դարձնել մեր

[1] Տես Астафьева О.И., Колин К.К., Концептуальные основы государственной политики в области духовной культуры для обеспечения единства российского народа и национальной безопасности РФ, էջ 67:

[2] Շաֆաք Է., Ստամբուլի բիճը, Եր., 2012, էջ 184:

մշակույթի հարստությունն ու ինքնատիպությունն արտացոլող սոցիոմշակութային արժեքների համակարգին, ինչպես նաև բարձր հոգևոր-բարոյական նորմերի ու պահանջմունքների ձևավորմանն ու հետագա զարգացմանը:

Այսպիսով՝ իր կենսագործունեության ընթացքում հայ ժողովրդի բնակության տարածքը համապատասխանել է ազգային մշակույթի պահպանման ու վերարտադրության տարածքին, իսկ սա նշանակում է, որ մշակութային ինքնության պահպանությունը երկար դարեր դարձել է իր հայրենիքում հայ ժողովրդի գոյատևման առանցքային պայման: Այսինքն՝

1. Ազգը որպես ցեղային նույնականություն, համաշխարհայնացման մեր դարաշրջանում քաղաքակրթությանը բնորոշ սոցիոմշակութային ներթափանցումների ու ներխուժումների պայմաններում կատարում է տեղեկատվական պաշտպանության գործառույթ մշակութային այն ավանդույթների պահպանման միջոցով, որոնք ձևավորվել են նախորդ դարաշրջաններում և ապացուցել էթնիկ նույնականության պահպանման իրենց կոչումը:

2. Այդ հիմնավորմամբ էլ «ազգային անվտանգություն» եզրույթը գործնականում բխում է ազգային մշակույթի էությունից: Հայ ժողովրդի համար մշակութային ինքնության պահպանումը սոսկ մշակութային խնդիր չէ, այլ առաջին հերթին ուղղված է ազգային ինքնության պահպանմանը, իսկ անկախ պետականության իմաստավորումն, ըստ էության, ուղղված է պատմականորեն ձևավորված մշակութային տարածքում սեփական ազգային ինքնությունը վերարտադրելուն:

3. Մեր օրերի զարգացող աշխարհում հայոց մշակութային ինքնատիպության պահպանությունը կախված է հայ ժողովրդի ստեղծագործական ներուժի լիարժեք դրսևորման և իրացման համար հնարավոր բոլոր պայմանների ձևավորումից: Սա թույլ է տալու ապահովել հայկական մշակույթի ապագան՝ նրա ստեղծագործական զարգացման հիման վրա, ինչն այսօր մշակութային զարգացումներում իշխող միտում է: Հետևաբար, ազգային մշակույթի ստեղծագործ ներուժի բացահայտման ու դրսևորման պայմանների ստեղծումը մեր ժամանակներում մշակութային ոլորտին առնչվող ազգային անվտանգության առաջնային և սկզբունքային խնդիրն է: